

Կ Ա Ր Գ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
(ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ), ՄՇԱԿՄԱՆ, ՍՏԵՂԾՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործման (շահագործման), մշակման, ստեղծման, փորձարկման գործընթացներին առնչվող հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **արտադրող**՝ սույն կարգի իմաստով ցանկացած լիցենզավորված իրավաբանական անձ, որը նախագծում և (կամ) արտադրում է տիեզերական տեխնիկական օբյեկտ կամ ունի նախագծված և (կամ) արտադրված արտադրանք՝ սեփական անվանմամբ կամ իր ապրանքային նշանի անվանմամբ շուկայահանման նպատակով.

2) **պատվիրատու**՝ սույն կարգի իմաստով իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն արտադրողի հետ կնքված պայմանագրի հիման վրա տալիս է պատվեր՝ ստեղծված կամ մշակված տիեզերական տեխնիկական և (կամ) օբյեկտը ձեռք բերելու համար.

3) **լիազոր մարմին**՝ տիեզերական գործունեության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմին:

2. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ), ՄՇԱԿՄԱՆ, ՍՏԵՂԾՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ

3. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործման (շահագործման), մշակման, ստեղծման, փորձարկման գործընթացներն արտադրողի և պատվիրատուի միջև կարգավորվում են պայմանագրային հիմունքներով՝ պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերին համապատասխան:

4. Աշխատանքային յուրաքանչյուր փուլի ավարտից հետո պատվիրատուի և արտադրողի մասնակցությամբ կազմվում է կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտ:

5. Արտադրական գործընթացների ընդհանուր համակարգումն իրականացնում է նախագծող կազմակերպությունը:

6. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխանությունը և պայմանագրային երաշխիքային ժամկետները շահագործման հանձնելու պարտադիր պայմաններն են:

7. Շահագործման ենթակա արտադրատեսակի հանձնման-ընդունման գործընթացն իրականացվում է պատվիրատուի և արտադրողի համատեղ կազմած արձանագրությամբ: Հանձնման-ընդունման գործընթացի ավարտից հետո արտադրողը եռօրյա ժամկետում պատվիրատուին է փոխանցում շահագործման անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի ամփոփ փաթեթը:

3. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ), ՄՇԱԿՄԱՆ, ՍՏԵՂԾՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործման (շահագործման), մշակման, ստեղծման, փորձարկման տեխնոլոգիական գործընթացները ներառում են տեխնոլոգիական ապահովման համակարգը (այսուհետ՝ տեխնոլոգիական համակարգ), որն օժանդակում է «հետազոտություն-նախագծում-

արտադրություն» ցիկլի փուլերի փոխգործակցման արդյունավետ քայլերի ընտրությունը՝ ապահովելով նախագծման և արտադրության գործընթացներում որակի և հուսալիության պահանջվող չափանիշները:

9. Տեխնոլոգիական ապահովման համակարգը նախատեսում է՝

1) տեխնոլոգիական իրագործելիության կանխատեսում, հիմնավորում և գնահատում.

2) տեխնոլոգիական խնդիրների նպատակային լուծման նախադրյալների ապահովում՝ զարգացման պլանների, ուղղությունների կանխատեսում և իրագործում.

3) նախագծային և փորձակոնստրուկտորական տեխնոլոգիական առաջնահերթությունների ճշգրտում և սահմանում.

4) տիեզերական սարքաշինության անհրաժեշտ արտադրական բազայի և որակի ապահովում.

5) նախագծային, փորձակոնստրուկտորական, հետազոտական և արտադրական գործընթացների և ընթացակարգերի հաջորդական իրականացման արդյունքների համակարգված տեղեկատվական հենքի ձևավորվում:

10. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների մշակումն ու ստեղծումը ներառում են հետևյալ գործընթացները՝

1) տեխնիկական պայմանների (տեխնիկական կանոնակարգերի) պահանջների հստակեցում և համապատասխանեցում.

2) առաջադրված տեխնիկական պայմանների հիման վրա, փորձանմուշների (մոդելների) աշխատանքային տեխնիկական մասնագրերի կազմում, նախագծի իրագործելիության որոշում, էսքիզային և մանրամասն նախագծում, ռիսկերի կանխատեսում և գնահատում, տեխնոլոգիական գործընթացների մշակում և ճշգրտում.

3) տեխնիկական և կազմակերպչական հայեցակարգերի իրագործելիության գնահատում՝ արտադրության կազմակերպման ժամանակացույցի, շահագործման, պահպանման և ծախսերի հետ կապված սահմանափակումների սահմանում.

4) տիեզերական մեկնարկային համալիրների և ղեկավարման կենտրոնների նախագծում, կառուցում և տեխնոլոգիական սարքավորումներով կահավորում:

11. Նախագծակոնստրուկտորական աշխատանքները ներառում են՝

1) ծրագրի ժամանակացույցի մշակում.

2) անհրաժեշտ սարքավորումների, դրանց մատակարարների վերլուծություն և ընտրություն.

3) տիեզերական սարքաշինության տեխնիկական և կազմակերպչական իրագործելիության, անվտանգության, հուսալիության և ռիսկերի գնահատում.

4) օրենքով սահմանված կարգով տեխնիկատնտեսական և (կամ) ֆինանսատնտեսական հիմնավորման մշակում.

5) նախագծային և տեխնոլոգիական փաստաթղթերի մշակում, ներառյալ՝ տիեզերական սարքերի և բաղադրամասերի հավաքման, ինտեգրման և փորձարկման ժամանակացույցերը.

6) տեխնիկական պայմանների համաձայն նախագծակոնստրուկտորական աշխատանքների կատարման հաջորդականության հստակեցում.

7) մշակված տեխնիկական լուծումների՝ արտոնագրային և հեղինակային իրավունքների հետ համապատասխանության հիմնավորում.

8) տեխնիկական կանոնակարգերով սահմանված հիմնական տեխնիկական բնութագրերի և գործառնական ցուցանիշների հիմնավորում:

12. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործման (շահագործման) և փորձարկման աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության ապահովման հիմնական պահանջների ու պայմանների պահպանումը պարտադիր է: Նման աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության ապահովման հիմնական պահանջներն ու պայմաններն են՝

1) տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործման (շահագործման), մշակման, ստեղծման, փորձարկման անվտանգության ապահովման միջոցառումների պլանավորումը, կազմակերպումը, պատասխանատվությունը և վերահսկումն իրականացնում են վերոնշյալ գործառույթներում ընդգրկված բոլոր

պատասխանատու անձինք և կազմակերպությունների ղեկավարները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև այլ փաստաթղթերով նախատեսված անվտանգության պահանջների պարտադիր կատարմամբ կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

2) տեխնոլոգիական բոլոր փուլերի պատասխանատուներն իրենց իրավասության սահմաններում իրականացնում են անվտանգության նորմատիվ փաստաթղթերի և հրդեհային անվտանգության վերաբերյալ այլ ակտերի մշակման կազմակերպումը և հաստատումը.

3) տեխնոլոգիական գործընթացների բոլոր փուլերում ընդգրկված մասնակիցների կողմից սահմանված անվտանգության նորմերի և միջոցառումների անվերապահ և ճշգրիտ կատարումը.

4) բնակչության և շրջակա միջավայրի անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում լիազոր մարմինն, պետական մարմիններին, կազմակերպություններին և քաղաքացիներին ժամանակին տեղեկացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Բ. ԲԱԴՅԱԼՅԱՆ